

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՍԵՂԱ ՄԱՐԱԲՅԱԼ

Գրիգոր Խլաթեցու պատմագրական ժառանգության մի մասն են կազմում նրա թղթերը, որոնցում շոշափվում են կենցաղային, սոցիալական և մշակութային հարցեր: Այդ թղթերը ղանաղան անձանց ուղղված նամակներ են, իրեն դիմած մարդկանց հարցերի պատասխաններ և կամ որևէ առիթով գրված թուղթ-ըրաբերական, օրհնութիւն՝ ուղղված միաբանութիւնների առաջնորդներին կամ բնակչությանը: Գրիգոր Խլաթեցու նամակներից մի քանիսին հանդիպում ենք առանձին ձեռագիր ժողովածուներում: Դրանցից մոտ երկու տասնյակ պահպանվել է Թովմա Մեծոփեցու կազմած «Թուղթ նամակի վարդապետաց եկեղեցւոյ, զոր ի կեանս իմ գտի ես՝ պիտականուն վարդապետս Թովմա, աստ հաւաքեցի վասն գրոց աշակերտի» նամակների ժողովածուում, որը նրա դպրոցում օգտագործվել է որպես ձեռնարկ՝ նամակներ գրել սովորեցնելու նպատակով: Ժողովածուն մեզ է հասել հետագայում կատարված ընդօրինակութամբ և պահպանվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում<sup>1</sup>:

Գրիգոր Խլաթեցու առաջին նամակը վերաբերում է 1406 թ.: Այդ թվականին մահանում է Խառաբաստա բարձր տիպի դպրոցի ընդունապետ Վարդան Հոգոցվանեցին և դպրոցի ընդունապետութիւնը ստանձնում է Գրիգոր Խլաթեցին<sup>2</sup>: Այդ է հաստատում նաև Խլաթեցու նամակը՝ ուղղված Գրիգոր Տաթևացուն: Ձեռագրի լուսանցքում գրված է «Գրիգոր վարդապետ Մերենց»<sup>3</sup>: Նամակում նա ողջունում է Տաթևացուն, ապա հավաստում է իր հավատարմութիւնը նրան և նրա գործին, որին հետևելու է և ինքը, որպես դպրոցի նոր ընդունապետ. «Հետեւիմք անխոտոր պողոտայիդ, աւժանդակեմք պատերազմող տգւոյդ»<sup>4</sup>:

Սակայն անբարենպաստ պայմաններում հնարավոր չէր դպրոց պահել և Խլաթեցին շուտով այն ցրում է:

Երկրորդ նամակը վերաբերում է 1409 թ. և ուղղված է Թովմա Մեծոփեցուն, երբ վերջինս իր ընկերների և ուսուցչի՝ Հովհաննես վարդապետ Մեծո-

<sup>1</sup> Վենետիկ, Մխիթարյան մատենադարան, ժողովածու N 1091, էջ 388—475 (այսուհետև՝ Վենետիկ, ձեռ. N 1091): Հոգվածը պատրաստելիս օգտագործել ենք Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մանրաթապակները (Մատենադարան, Դրսի մանրաթապակների ֆոնդ, N 377):

<sup>2</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Քամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 41:

<sup>3</sup> Գրիգոր վարդապետը բանասիրութիւնը հայտնի է և՛ «Խլաթեցի», և՛ «Մերենց» մականուններով: Դրանցից առաջինը նա ստացել է ծննդավայրի (Խլաթ), իսկ երկրորդը՝ հոր (Մեր) անուններից: Սակավազեպ վերջում է նաև «Արծկեցի» կամ «Բզնունի», որովհետև Ցիպնա վանքը, ուր երկար ժամանակ գտնվում էր Գրիգոր Խլաթեցին, Արծկե քաղաքի մոտ էր և Բզնունի գավառում:

<sup>4</sup> Վենետիկ, ձեռ. N 1091, էջ 435:

փեցու հետ միասին գտնվում էր Արարատյան գավառում: 1408 թ. Գրիգոր Տաթևացին գալիս է Մեծոփա վանք և կազմակերպում է բարձր տիպի դպրոց, որտեղ տարի ու կես դասավանդելուց հետո հեռանում է: Մինչև այժմ ստույգ հայտնի չէր, թե 1409 թ. Մեծոփա վանքից հեռանալուց հետո, Գրիգոր Տաթևացին ո՞ւմ է հանձնել դպրոցի ռաբունապետությունը: Ա. Մովսիսյանը ենթադրել է<sup>5</sup>, որ այդ պաշտոնը հանձնվել է Թովմա Մեծոփեցուն: Սույն նամակից պարզվում է, որ 1409 թ. Գրիգոր Տաթևացին Մեծոփա վանքը թողնելիս ռաբունապետ է նշանակել ոչ թե վանքի առաջնորդ Հովհաննես Մեծոփեցուն կամ էլ Թովմա Մեծոփեցուն, այլ Գրիգոր Խլաթեցուն՝ իր դասընկերոջը և նշանավոր գրչին: Արդյոք այս բանից չի՞ դժգոհել Հովհաննես Մեծոփեցին, որ գնացել է Տաթևացու ետևից և այլևս վանք չի վերադարձել: Երբ Գրիգոր Տաթևացին թողնում է Մեծոփա վանքը, նրան հետևում են մի խումբ վարդապետներ և աշակերտներ՝ Մեծոփա վանքի առաջնորդ Հովհաննես Մեծոփեցու պիսավորությունը: Տաթևացուն հանդիպում են Երևանում, որտեղ նա վարդապետական աստիճան է շնորհում իր աշակերտներին, այդ թվում և Թովմա Մեծոփեցուն, իսկ ինքը մնում է Տաթևի վանք և շատ շանցած՝ վախճանվում: Հովհաննես Մեծոփեցին և մի քանի այլ աշակերտներ չեն վերադառնում Մեծոփա վանք: Ի՞նչն էր դրա պատճառը: Այդ խնդրի պարզաբանմանն օգնում է Խլաթեցու սույն նամակը: Ինչպես երևում է նամակից, Թովմա Մեծոփեցու հարազատների խնդրանքով Խլաթեցին դիմել է Թովմա Մեծոփեցուն և խնդրել վերադառնալ, խոստանալով նրան հանձնել Մեծոփա դպրոցի ռաբունապետությունը. «Այսուհետև առ իս դարձիր, ի տուն քո, և առ եղբարս քո... Գիտե՞ս թե որքան նեղացեալ է եղբայրդ քո Յոհաննէս էրէցդ ի ճանապարհիդ... նոյնպէս և պարոն Յովհաննէս, և Գորգի Մելիքն, և միաբան ամէն մեծէ ի փոքրը: Եւ թէ կու ջանաս՝ զՅովհաննէս վարդապետդ ի հետ բերես, ապա թէ չէ ի գալ, դու եկ ի տուն քո՝ առ ընտանիս քո... Դու առ մեզ արեկ, մեր աչացս լոյս ես և սրտի սուն: Ի Տէր Յուսկայ որդոյ վանացն միեռ ի Սքանչելագործն քո է՞»<sup>6</sup>: Ինչպես տեսնում ենք, նամակում նշված է նաև Մեծոփա դպրոցի ազդեցութեան սահմանը. Բերկրի գավառի Տեր Հուսիկի որդու վանքից մինչև Արծկե գավառի Սքանչելագործ վանքն ընկած տարածքը, որի բնակիչներից հավաքած միջոցներով պետք է պահվեր դպրոցը: «Ես,— գրում է Խլաթեցին,— էնց կու կամիմ Աստուծով զքեզ առ իս՝ զինչ ղլոյս աչացս, և ղլուր ականջացս... Կամիմ որ զմնացեալ աւուրքս ի քո շուքն անցուցանեմ, և զհողս հողոյն քո ձեռքդ տաս: Ողջ լեր Աստուծով: Թուղթս գնա յԱրարատեան գաւառն»<sup>7</sup>: Նամակից նաև երևում է, որ իսկապես Հովհաննես Մեծոփեցին փերավորվել է և չի վերադարձել վանք, այլապես ի՞նչ են նշանակում Թովմա Մեծոփեցուն Խլաթեցու գրած նամակի հետևյալ տողերը. «Եւ թէ կու ջանաս զՅովհաննէս վարդապետդ ի հետ բերես, ապա թէ չէ ի գալ, դու եկ ի տուն քո»<sup>8</sup>: Հովհաննես Մեծոփեցին մահացավ Հավուց Թառում և թաղվեց այնտեղ<sup>9</sup>:

<sup>5</sup> Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 205:

<sup>6</sup> Վենետիկ, ձեռ. № 1091, էջ 398:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 397—398:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Թովմա Մեծոփեցի, էջ 61:

1410 թ. Թովմա Մեծոփեցին վերադառնում է վանք, ավելի քան երեսուն տարի վարում Մեծոփա դպրոցի ընդունապետությունը և մինչև Խլաթեցու մահը՝ 1425 թ., նրա հետ պահպանում բարեկամական հարաբերություններ:

Նամակներից մի քանիսը ժամանակի նշանավոր գործիչներ Գրիգոր Տաթևացու, Թովմա Մեծոփեցու, տոմարագետ Հակոբ Արիմեցու, Գրիգոր Խլաթեցու, Հովհաննես Մեծոփեցու, Հակոբ Սաղմոսավանեցու, Հովհաննես Հերմոնեցու և ուրիշների մտերմության և համատեղ գործունեության վկայությունն են: Առաջին, օրինակ, Գրիգոր Խլաթեցին Խլաթից գրած մի նամակում Թովմա Մեծոփեցուն ցանկանում է առողջություն թի պարծանս մեր և ամենայն Հայոց տոհմի»: Այնուհետև նա Մեծոփեցուն շնորհակալություն է հայտնում իր և Հակոբ Արիմեցու վիճակով անհանգստանալու և իրենց Մեծոփա վանք հրավիրելու համար և գրում, որ «չետոյ գամք ի ձեր շուրջ հանգչիմք և ի ձեր տեսող մխիթարիմք»<sup>10</sup>: Մի այլ նամակում արդեն ինքն է Թովմա Մեծոփեցուն և նրա հողերը հայր Մաթեոսին հրավիրում իր մոտ՝ հանգստանալու: Նամակում Գրիգոր Խլաթեցին նախ նկարագրում է իր անհաստատ վիճակը, որ հետևանք էր այլազգի լեռնաքնակների հաճախակի հարձակումների (ազոր վախեցաք և սասանեցաք և տեղացի տեղ փախստական տատանեցաք»), և ապա՝ ժամանակավոր խաղաղության ժամանակ Խլաթ վերադառնալը, ուր «լա հանգիստ է»: Խլաթի վանքը այդ ժամանակ այլազգիների վողմից քանդված և այրված էր: Խլաթեցին գրում է, որ վանքը ուզում է նորոգել և նոր միայն հրավիրել Թովմա Մեծոփեցուն. «Ըն յետ այգեկթոցն մարդ յուղարկեմք և վարդապետն խոնարհի առ մեր աղաչանս և գայ: Եթէ ապրիմք ձեր տեսող ուրախանամք, և եթէ մեռանիմք, զհողս հողոյն տաս և զհողիս աղաւթիւք յուղարկես»<sup>11</sup>:

Երբ է գրվել այս նամակը, ընդառաջել է Թովմա Մեծոփեցին Խլաթեցուն նրան այցելելու հարցում, թե ոչ: Հարցը պարզելուն օգնում են ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնցից իմանում ենք, որ 1413 թ. մի վարդապետ իր հոգևոր հոր՝ Մաթեոսի հետ գտնվում էր Խլաթա վանքում, որտեղ գտել էր մի հին ձեռագիր և կարգավորել: Ակադեմիկոս Լ. Խաչիկյանը ձեռագրի լուսանցքում պահպանված երկու տառերից՝ «Թ» և «Ա» ենթադրաբար վերականգնում է Թովմա անունը<sup>12</sup>: Ձեռագրի գրչության քննությունը<sup>13</sup> ցույց է տալիս, որ նշված Թովման իսկապես Մեծոփեցին է, հետևաբար Մաթեոսը՝ նրա ուսուցիչն է: Այսպիսով, Թովմա Մեծոփեցին ընդառաջել է Խլաթեցուն և իր ուսուցչի հետ եկել Խլաթա վանք: Ուրեմն, նամակը գրվել է 1413 թ. այգեկութից առաջ, իսկ ձեռագիրը կարգավորվել է 1413 թ. վերջերին, Խլաթա վանքում, ուր հյուրընկալվում էին Թովման և իր ուսուցիչ Մաթեոսը:

<sup>10</sup> Վենետիկ, ձեռ. № 1091, էջ 397:

<sup>11</sup> Վենետիկ, ձեռ. № 1091, էջ 467:

<sup>12</sup> «ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401—1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 147, ծանոթություն. «Այս տողի շարունակությունը, լուսանցքի վրա, գրված է եղել ինչ-որ անուն, որից պահպանվել են միայն՝ «Թ» և «Ա» տառերը, վերից վար դասավորությամբ: Հնարավոր է ենթադրել, որ այստեղ գրված է եղել գրչի անունը՝ Թովմա»:

<sup>13</sup> Թովմա Մեծոփեցու գրչությամբ մեզ են հասել ավելի քան 10 ձեռագրեր, որոնց մեծ մասը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում:

Հետաքրքրական է նաև Ռշտունյաց Անձղնապատ մենաստանի առաջնորդին և միաբանությունը իրաթեցու ուղղած երկարաշունչ նամակը: Լուսանցքում դարձյալ գրված է «Գրիգոր վարդապետ Մերենց»: Այս նամակում Գրիգոր իրաթեցին գրում է, որ այն, ինչ կատարում են այդ վանքի միաբանները, չի կատարվում «ոչ ի մեր ազգս, և ոչ այլ ազգս քրիստոնէից, ոչ ի Հռոմս, և ոչ ի մէջ Վրաց, ոչ Վաղարշ, և ոչ նեստորականաց, որ շարք են, այլ միայն այսպիսի դառն և շարութեան որոմն ի միջի ձերում է սերմանեալ շարին և դուք միշտ մշակ եղեալ շարին, բուսուցանէք ի ձեզ և պտղաբերէք»<sup>14</sup>:

Իսկ ի՞նչ էր պատահել, ի՞նչն էր վրդովում Գրիգոր իրաթեցուն: «Այս է զոր յայտնի ասեմ. զոր ինչ քահանայ յիւր ժամանակն բաժին հոգոյ իւր ստանայ, կամ ինչս, կամ գիրս, կամ այլ իրք, զի ոչ ունի դուստր կամ որդի, ի միտս իւր դնէ՝ այն բարի յիշատակ մնալ, և դուք զայն մատնէք ի յայլազգիս և զհոգի նորա կորուսանէք»<sup>15</sup>: Ուրեմն, անժառանգ կրոնավորների ունեցվածքը եկեղեցուն հանձնելուց հետո, եկեղեցուն թողնելու և հավատացյալներին բաժանելու փոխարեն, տալիս էին այլազգիներին: Գ. իրաթեցին բողոքում է այս արարքի դեմ, այն համարում «նոր աղանդ շարութեան» և զգուշացնում դրա վտանգավոր հետևանքներից, որովհետև «որ զայնպիսին տեսանէ ի մէջ ձեր, ոչ յիշատակ ստանայ, ոչ գիրքս պահէ, ոչ աշակերտ առնէ և ուսուցանէ, ոչ ի յեկեղեցի արդիւնք առնէ», և այն տարածվելով մասնոր՝ հսկայական վնասներ կտա: «Վասն որոյ, յորժամ լուայ ես, ի խորս խոցեցայ: Եւ աղաչեմ թղթովքս իբր ի մաւտոյ առ ոտս ձեր անկեալ, զի բարին առնիցէք»<sup>16</sup>: իրաթեցու անհանգստության պատճառը հասկանալի է: Եկեղեցին, զրկվելով եկամտի այս աղբյուրից, աշակերտ չի կարող պահել, ուսուցանել, ձեռագիր չի ստանա կամ գրել տալու հնարավորություն չի ունենա: Այդ իսկ պատճառով Գրիգոր իրաթեցին անձղնապատցիներին կոչ է անում մնալ իրենց բարձրության վրա և շնթարկվել աշխարհական իշխանությանը, առավել այլազգիներին:

Ե՞րբ են տեղի ունեցել այս դեպքերը:

Ձեռագրերի հիշատակարաններից հայտնի է դառնում այս դեպքերի ոչ միայն մոտավոր ժամանակը, այլև որոշ մանրամասներ: XV դ. հիշատակարաններից մեկից իմանում ենք, որ գրիչ Թուման 1423 թ. գնացել է Ռշտունյաց Անձղնապատ ուխտը՝ Հակոբ բարունապետի մոտ սովորելու, սակայն հանդիպել է խառնաշփոթ վիճակի. «անկանք ի մէջ տգիտաց և անվարժ և անկրօն կրօնաւորաց: Եւ շարչարէին զմեզ որպէս ղայլազգի... զի էին ինքնահաճք և ինքնահաւանք, ցոփազրուցք, շաղակրատողք, ալլոց արհամարհողք և զինքեանս յարգողք»<sup>17</sup>:

Այս որակումները, հատկապես «անկրօն կրօնաւորք» արտահայտությունը, շատ բան են ասում անձղնապատցիների մասին և ավելի համահնչուն են իրաթեցու «նոր աղանդ շարութեան» արտահայտությանը: Ուրեմն, Անձղնապատում շփոթությունը տեղի է ունեցել 1423 թ.: Հետևաբար, իրաթեցու՝ այդ դեպքերին վերաբերող նամակը գրված է 1423 թ., քանի որ դրանից առաջ

<sup>14</sup> Վենետիկ, ձեռ. № 1091, էջ 440:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 441:

<sup>17</sup> «ԺԾ ղարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին, էջ 302:

Անձղնապատում խառնաշփոթություն տեղի չի ունեցել, ինչպես վկայում է 1420 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանն<sup>18</sup>: Այդ թվականին, երբ Հովհաննես Մոկացին սովորում էր Անձղնապատի բարձրագույն Հակոբ Ասպիսնակցու մոտ, այնտեղ ամեն ինչ խաղաղ էր, մինչդեռ երեք տարի անց մեզ արդեն ծանոթ Բուժման, ներկայացնելով խառնաշփոթ վիճակը, գրում է. «Երբ ոչ դատք հանգիստ ոտից մերոց՝ ցրուեցաք յիւրաքանչիւր տեղիս՝ վարդապետք և աշակերտք: Եւ իմ եկեալ առ ծնօղն իմ՝ ի գեղն որ կոչի Բերդավանք, և աստ վճարեցի զգիրքս... Եւ ոչ տայ դադար միտքս իմ ինձ, զի կամիմ դառնալ առ վարդապետն իմ Յակոբ, զի կամիմ խիստ զուառուցանելն»<sup>19</sup>:

Ուրեմն, այս դեպքերը պետք է տեղի ունեցած լինեն հենց 1423 թ., մանավանդ, որ Խլաթը Անձղնապատից շատ հեռու չէր և Գրիգոր Խլաթեցին շատ շուտ կարող էր լսել այնտեղ կատարված դեպքերի մասին:

Մի քանի թղթեր հանվանե ուղարկված են ունևոր անձանց՝ կարոտյալներին ու աղքատներին օգնելու ակնկալությամբ, որոնք ասնկեալ է ի փորձութիւն զպատուհասն... շրջի ողորմելի կենաւք, խնդրել ողորմութիւն... եւ դուք վասն սիրոյ Քրիստոսի արարէք դրմայ ողորմութիւն՝ որ շատ և որ սակաւ... Գիտեմք, որ դուք էլ ի մէջ վշտի եք, հանապազ՝ ազգի-ազգի խնդրողաց և յանիրաւ պահանջողաց»<sup>20</sup>,— գրում է նա և այդուհանդերձ խնդրում աղքատներին օգնել:

Մի այլ նամակում նա ունևորներին խնդրում է ամեն անգամ ճաշի նստելիս աղքատներին ևս կերակրել: Առաքել Բաղիշեցու վկայությամբ, Գրիգոր Խլաթեցին երբեք առանց աղքատի սեղան չէր նստում և ուրիշներից էլ պահանջում էր նույնն անել<sup>21</sup>: Այդ փարզի թղթերից մեկում Գրիգոր Խլաթեցին ունևորներից խնդրում է քարոզի և խրատի փոխարեն օգնել Մեծոփա դպրոցին, զգի ուրախասցին մանկունք սուրբ Լուսաւորչին և կարճասցի լեզու հերձուածողացն դասու»<sup>22</sup>:

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից մեկում պահպանվել է Գրիգոր Խլաթեցու նամակներից մեկը, որն ունի «Դատաստան Մերենց Գրիգոր վարդապետի» վերնագիրը. նամակը վերջանում է «Գրիգոր վարդապետին է Մերենց այս բանս»<sup>23</sup> նախադասությամբ: Ղազար անունով մեկը դիմել էր Գրիգոր Խլաթեցուն՝ պարզելու, թե ինչու մեր ազգին պատկանող որոշ մարդիկ մեր սովորութիւններից հեռանում և դիմում են մահմեդական օրենքներին, որոշ հարցերում ղեկավարվում են նրանցով: Օրինակ, ամուսնության և ամուսնալուծության հարցերում դիմում են ոչ թե եկեղեցուն, այլ «ի դադին անկանին և քեպին յիշեն»: Ահա Գրիգոր Խլաթեցու պատասխանը.

«Այն մարդն, որ մեր օրինացս հաւան չկենայ, նա զանէծքն զՅուդային, զԿայենին և զՅուլիանոսին ընկալցի:

Մեր օրենքս այս է. թէ հարսին զարդելքն և բաժինքն է, թէ փեսային, թէ տղայ եղեալ է ի միշին՝ այն ամենայն տղայինն է»<sup>24</sup>: Եւ թէ տղայ չէ եղեալ

18 Նույն տեղում, Դասն 3-րդ (1481—1500 թթ.), Երևան, 1967, էջ 354:

19 «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին, էջ 302:

20 Վենետիկ, ձեռ. № 1091, էջ 442:

21 Մատենադարան, ձեռ. № 4866, էջ 252ա:

22 Վենետիկ, ձեռ. № 1091, էջ 453:

23 Մատենադարան, ձեռ. № 8076, էջ 74բ:

24 Գրիչն այս նախադասությունը սխալմամբ կրկնել է:

ի մէջ՝ ուրան է, զայն գնացելոյ հոգին հոգան: Եթէ այլ մնայ, փեսայ ի հօրէ տուածն յիւր աէրն դառնայ, և աղջկան հօր տուածն իւր տէրն դառնայ: Ապայ կերածն ու մաշածն չգայ յիշումն մեր: Առաջնորդաց հրամանքն այս է. և որ ուղի չլինի՝ մասն ու բաժին ընդ անհաւատսն գիցէ: Եւ դուք ողջ լերուք ի տէր Աստուծով:

Գրիգոր վարդապետին է Մերենց այս բանս»<sup>25</sup>,

Ինչպես տեսնում ենք, այս նամակում Գրիգոր Խլաթեցին բացատրում է հայոց սովորույթները, օրենքները և դրանց չհեռուողներին սպառնում անեծքով: Նամակից երևում է, որ հավաապիոթյան դեմ պայքարի եղանակը նա տեսնում էր ժողովրդին հր հավատին ամուր կապելու, իր ավանդների, հիշատակների, սովորույթների, սրբությունների նկատմամբ հարգանքի արմատացման ու բարձրացման մեջ: Այսպիսի բնույթ ունեն Գրիգոր Խլաթեցու նամակները, որոնցից մի քանիսը ներկայացրինք: Այդ նամակների արժեքն այն է, որ դրանք լրացնում են հեղինակի ապրած ժամանակաշրջանի մասին մեր ունեցած գիտելիքները և ամբողջացնում նրա գործունեության վերաբերյալ մեր պատկերացումները: Միաժամանակ ձեռագրերի հիշատակարանների օգնությամբ նորովի լուսարանվում են պատմական և մշակութային որոշ հարցեր:

## ПИСЬМА ГРИГОРА ХЛАТЕЦИ

СЕДА МАРАБЯН

### Резюме

Григор Хлатеци — видный деятель средневековой армянской культуры. Его эпистолярное наследие представляет большой интерес. Письма Хлатеци имеют определенную историческую ценность, ибо содержат сведения об исторической действительности средневековья и деятельности самого Хлатеци. Сравнительное исследование памятных записей, рукописей и писем проливает свет на многие вопросы истории и культуры средневековья.

<sup>25</sup> Մատենադարան, ձեռ. № 8076, էջ 74բ: